

ՀԱՅ ՈՒԶԵԼՈՒ ՊԵՍ

Ճամբան բլուրին գազաթեն կիջնար:

Հրացան մը կրելու, պես՝ բիրը ուսին դրած, ձախ թևը երկայն-երկայն փարտելով, Թորոս հոն հասավ որ՝ արևը դեմի լեռներուն ետին էր, հայտնվելու մոտ, հորիզոնը նարնջագույններու մեջ էր ամբողջովին: Մեղմ հով մը կփչեր ու շուրջանակի ձորերուն մեջ խորունկ լռություն մը կար:

Թորոս, որ բանի մը վրա չէր խորհեր, հանկարծ նշմարեց. կին մը կքալեր բլուրին ստորոտեն, միայնակ, մանր-մանր ու հանդարտիկ, առանց իրեն նայելու:

Խասն էր: Մարդ չկար:

Թորոսի գլխին մեջ իսկույն միտք մը փայլեցավ: Պատեհություն մըն էր, չէ՞ր կարելի, արդյոք, օգտվիլ... Խասը աղվոր, փայլուն կին էր: Իրավ է՝ իրմե մեկ-երկու տարի ալ մեծ էր, մայր էր, կարգած աղջիկ ուներ, պարկեշտ էր, բայց ի՞նչ կըլլար... Կարելի էր փորձել, կհաջողեր թերևս, երկուքին միջև գաղտնի պիտի մնար, ո՞վ պիտի իմանար:

Ու Թորոս ոտքերը վեր առավ, շտապեց, ձախ թևը երկայն-երկայն փարտելով:

Բլուրին տակը հասավ որ՝ Խասը ճամբուն փոշոտ, կարմրորակ հողով մասը անցեր էր ու անկյունը կդառնար: Ալ ավել շտապեց ու ինքն ալ անկյունը դարձավ:

Հիմա շատ մոտ էր Խասին, գրեթե առաջքն էր. ինք գառիվարին առաջին ոլորապտույտին վրա էր, ան ալ՝ երկրորդին: Դեղին գծերով կարմիր էնթարին էր հագեր, փեշերը երկու կողմեն վեր առեր, գոտին կոխեր: Ազդրերուն կորությունները կտարուբերվեին ամեն քայլափոխին:

Թորոս խոհեմութեան համարեց չիմացնել, թե ինք ետևեն կուգար: Հանկարծ Խասը կայնեցավ, գուլպային կապը քակել էր, ծռեցավ, կապեց: Ինքն ալ կանգ առավ, ու հակած դիրքին մեջ՝ գայն լավ մը դիտեց: Իր ցանկությունը ալ ավելի գրգռվեցավ:

Հետո Խասը քալեց: Ինք ալ հետևեցավ: Զառիվայրը շատ նեղ ու ցից էր: Աջ կողմը լեռն էր, իսկ ձախը՝ խորունկ, շատ խորունկ ձոր մը: Թորոս խորհեցավ հասնիլ քովը ու մեկ անգամեն առաջարկել: Բայց եթե ընդդիմանա՞ր, պոռա՞ր, չհանձնվե՞ր... հետևանքը՝:

Չէ՛, չէ՛, այդպես չէր ըլլար, կձախողեր: Պետք էր խոսկցությունով մը սկսեր: Ըսեր, օրինակ. «Բարի լույս, Խաս, առտուն կանուխ ո՞ւր ատանկ մինակդ, մարդդ ալ հետդ չկա»: Ան պիտի պատասխաներ, իհարկե: Հետո որպիսությունը կհարցներ, ասկե-ակե կխոսեին, ու ամենեն վերջը՝ խոսքը կբանար:

Այսպես ամենեն հարմարն էր:

Հետաձգեց, սակայն, որոշումը:

Ո՛չ: Սա գառիվարը իջնանք՝ մտածեց: Պատշաճ չէր գառիվարին վրա: Չորս կողմը բաց էր, պահվելու տեղ չկար: Խասը դժվար թե՛ համոզվեր: Չորը կիջնային, հոն լավ տեղեր շատ կային: Պետք էր, վերջապես, ամեն պարագաներն ալ նկատի առնել:

Ահա, Խասը հասավ ձորը ու սկսավ քալել ավազներուն վրայեն: Թորոս նույնպես հետևեցավ, ոտքերը կթաղվեին ավազներու մեջ ամեն քայլափոխին: Չորն ի վար կարգով, միակտուր ժայռերե բարձր պառեխներ կցցվեին, իրարմե, անջատ: Հետո կաղնիի, գիի թփաստաններ, ոստերը, տերևները՝ ոչխարի հոտերե կրծված, որոնք բոլոր գառիթափերը կծածկեին: Ինչքա՞ն ապահով կրնային ըլլալ ասոնց մեջ: Սատանան անգամ չէր տեսներ: Ավելի վարը, սա մեծ ժայռին ետևը, որ խիտ մացառներով շրջապատված էր...

Մոտենա՞ր արդյոք:

«Աս տարի ալ օդերը ինչպե՛ս չոր կերթան, Անձրև չեկավ, կնայիս, խոտերը չաճեցան,

Գետինները, ըսես, քար, երկաթ դարձան... Ով ինչ կուզե ըսե, հյունարով, տնաշեն կնիկ ես, Խաս: Մերինը, կրնամ ըսել ոչխարն ալ չէ կթած հիմա: Դուն՝ տանդ գործերը ըրեր ես, ոչխարդ կթեր ես, կանուխ-կանուխ ալ ճամբա ելեր ես: Կեցցես, որչափ գովեմ քեզ տեղն է...»: Ու խոսքը կբանար. «Ինձի նայե, Խաս...»

Միրսը շուտ-շուտ, շուտ-շուտ սկսավ զարնել:

Աղբյուր մը կար, առաջքը երկու բարտիներով, ջուրը փողրակեն կվազեր գուռը: Ծարավցավ: «Ջուր մը խմեմ, ու ալ պիտի հասնիմ, խոսիմ, – խորհեցավ, – ի՞նչ կուզե՝ թող ըլլա»: Մոտեցավ, շրթները փողրակին տվավ, թափած առատ պեխերը թաթխելով ջուրին մեջ, խմեց: Հետո ափովը դեմքը թրջեց, գոտին թուլցած էր կապեց, ու քալեց հասնելու համար, վերջապես:

Բայց՝ զարմացավ... Խասը ոչ միայն ձորին վերելքը բարձրացեր, այլ շիտակ ճամբուն վերջավորությանը հասեր էր: Խասը գացեր էր: Հեյվա ի... Ինք այդքան ժամանակ կորսնցուցեր էր, արդյոք, թե ան տեսեր էր զինքը, կասկածեր էր իրմե, փութացուցեր էր քայլերը:

Այգիները կերևեին արդեն: Ալ չէր ըլլար...

Շիտակ իր այգին մտավ Թորոս:

Բահն ու փետատը խաղողի թուփի մը տակ պահած էր: Գտավ զանոնք: Առու փորելու եկեր էր այդ օրը, բայց, փոխանակ աշխատելու, նստավ թթենիին տակ: Բուպիկ ոտքերով այգիներու պահապանը եկավ քովը: Թորոս տրամադրություն չունենալով, երկար չխոսեցավ հետը: Ճամբեց, ու շարունակեց նստիլ:

Դժգոհ էր:

Ո՛չ: Անճարակ էր ինք, ձեռքեն բան մը չէր գար. ճամբան որսը առաջին էր, պատրաստ էր՝ չկրցավ օգտվիլ: Չկրցավ մոտենալ, բերանը բանալ, խոսք մը ըսել: Ինք ալ մա՞րդ էր: Կնիկ ծնելու էր: Չէ՛՝ էրիկմարդ չէր ինք: Թու, իր էրիկմարդությանը:

Քիչ մըն ալ նստավ, հանկարծ ոտքի ելավ: Ի՞նչ կուզեր՝ թող պատահեր, վճռեց: Խասը այգին էր հիմա: Մինակ: Չպիտի ամչնար: Պիտի երթար քովը, հաց ուզելու պես՝ պիտի ուզեր:

Գնաց, խաղողի թուփերուն մեջ Խասը, կթոց մը ձեռքը, խաղող կրկթեր: մոտակա այգիներուն մեջ մարդիկ կային:

Շվարեցավ. ինչպե՞ս ըսեր, երբ այգիներուն մեջ ուրիշներ կային: Կարելի՞ էր:

- Ինչ կուզես, աղբար, հող կեցեր ես, բա՞ն մը կուզես, բա՞ն մը պիտի ըսես, – հարցուց Խասը, տեսնելով, որ Թորոս կսպասե պատին մյուս կողմը:

- Չէ, ի՞նչ պիտի ըսեմ, – պատասխանեց Թորոս, – պատելով այս կողմը եկա:

Ու անմիջապես իր այգին դարձավ, բահին ու փետատին քով, գլուխը գետինը դրավ ու պառկեցավ կոնակին վրա, սրդողելով ինքզինքին ալ, աշխարհին ալ հետ: